

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ.

### ՄԵԾ ԵՂՋԻԻՐԱԻՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ.

#### Մաքրութեան նշանակութիւնը կաթնասնեստութեան մէջ.

Կաթնատնտեսութիւնը շահաւէտ դարձնելու ամենակարեւոր պայմաններէց մէկն է նաև չափադանց մաքրութիւնը: Չանաղան գործարանական նիւթերէց, անասունների աղբից, կաշուի վերայի թէփից, մազերից, կաթնային մնացորդներից, փոշուց յառաջացած անմաքրութիւնները ոչ միայն իւրեանց մէջ անթիւ անհամար սունկեր են պարունակում, այլ և դոցա համար պարարտ հող են ներկայացնում: Հետևապէս, եթէ կամենում ենք սահմանափակել կամ բոլորովին արգելել սունկերի գործունէութիւնը, որ մեծապէս վնասում է կաթին, առաջին դործը պէտք է լինի կաթնատնից հեռացնել բոլոր անմաքրութիւններն և ձեռք առնել բոլոր միջոցները, որոնք նպաստում են մաքրութեանը և դիմադրում սունկերի զարգացմանը:

Պէտք է առանձին ուշ դարձնել նաև դոմերի և կաթնատները օդի մաքրութեան վերայ: Որքան անմաքուր լինի դոմի օդը, այնքան աւելի մեծ թուով սունկեր կպարունակէ և աւելի շատ սաղմեր կընկնեն կաթի մէջ, որով և աւելի արագ կերպով տեղի կունենան նորանում ամէն տեսակ վնասակար փոփոխութիւններ:

Կաթնատան օդը մաքուր լինելուց դատ, պէտք է հնարեղածին չափ նաև չոր լինի, բացի այն տեղից, ուր պանիր է մակարդում, որովհետև կաթն ընդունակ է խոնաւութիւնից յառաջացած և օդի մէջ տարածուած մըլահոտը, անմաքրութիւնները իւր մէջ ընդունելու և նոյնը հաղորդելու իրենից պատրաստած իւղին, այլ և սունկերը շատ լաւ բազմանում են խոնաւ օդի մէջ: Այս պատճառով կաթը չպէտք է պահել նաև այնպիսի տեղերում, որոնք իբրև ընակարան, մառան, խոհանոց են ծառայում, սրովհետև այդպիսի տեղերի օդը յաճախ հարուստ է լինում վատ դոլորչիւներով և բակտերիաներով: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ կաթնատան զիւրքը, առատաղև և պատերի ներկը, յատակի կաղմութիւնը պէտք է հնարեղածին չափ բաւարարութիւն տան մաքրասիրութեան պահանջ-

ներին: Առաստաղները, պատերը և յատակներն այնպէս պէտք է շինուած լինին, որ հարողանանք հեշտութեամբ մաքրել, լուանալ:

Նոյն կանոնները պէտք է պահպանել նաև կաթնամանների վերաբերմամբ: Ամանները հարող են լինել փայտից կամ մետաղից, գլխաւորապէս թիթեղից (կլայեկած երկաթ), կամ արծնապակած և կամ վերջապէս իւզաներկով ներկած: Մետաղեայ ամաններն աւելի հեշտ են մաքրուած, այդ պատճառով աւելի յարմար են համարուած փայտեայ ամաններից. վերջիններին ծաղոտերների մէջ կաթի մնացորդներն աւելի հեշտութեամբ են մնում: Փորձերը ցոյց են տուել, որ փայտեայ ամանների մէջ աւելի շուտ և արագ են աճում սունկերը, քան թիթեղեայ և արծնապակած ամանների մէջ: Այն դէպքում, երբ արծնապակած ամաններ դժուար է ձեռք բերել, աւելի լաւ է գործածել թիթեղեայ ամաններ: Թիթեղից շինուած ամանները բացի հեշտութեամբ մաքրուելուց, թեթեւութեան պատճառով աւելի յարմար են գործածութեան. թէպէտ փայտեայ ամաններն ևս այն առաւելութիւններն ունին, որ աւելի արժան և ամուր են լինում և վատ հաղորդող են տաքութեան \*:

Լաւ է նախ տաք և ապա սառն ջրով լուանալ, սրբել, չորացնել և առժամանակ թողնել մաքուր սառն օդի մէջ: Կաթնամանները աւելի լաւ մաքրել հարելի է խողանակով և լուալ նատրոնի մոխրաջրի (натровый щелокъ) լուծուածքով: Գործադրելիս հարկաւոր է այդ լուծուածքի մի մասը վերցնել և խառնել 100 մաս ջրի հետ, այնպէս որ ստացուած նոր լուծուածքը պարունակէ իւր մէջ  $0,17\%$  նատրոն. Սողայի (հալաքար) լուծուածքի հետ համեմատած սա աւելի յարմար է, որովհետև աւելի դիւրութեամբ է խառնուած ջրի հետ, աւելի լաւ է լուծում, մաքրում ճարպը և սողայից էլ թանգ չէ: Այս գործողութիւնը կատարելուց յետոյ ամանը պէտք է լուանալ նաև մաքուր և սառն ջրով: Յարմար միջոց է համարուած բացիլներ ոչնչացնելու համար նաև կրկնածմբաթթու կրի (двойная сернисто—кислая известь) հեղուկ վիճակի մէջ գործադրելը: Այս լուծուածքից պէտք է ցաննել առաստաղի, պատերի և յատակի, նմանապէս ամանների վերայ: Նախ քան մի աման գործադրելը հարկաւոր է ջրով լաւ լուանալ, իսկ մետաղեայ ամանները մաքուր շորով ևս չորացնել: Թէ նատրոնի և թէ սոդի լուծուածք-

\* Հիանալի կարճամաններ կարելի է ստանալ Մոսկուայում Ն. Վ. Վերբեչազիինից եւ ուրիշ բաղաճներում նոսր ներկայացուցիչներից:

Ներով լուանալուց յետոյ ամանները՝ պէտք է հանոնաւորապէս մաքրել, որովհետեւ այդ նիւթերը անհաճոյ համ են ունենում: Աւելի յարմար է ժամանակ առ ժամանակ, մինչև իսկ ամէն օր, ամանները ենթարկել չափազանց շատ տաքացրած գոլորշու (105—110°) ազդեցութեան, որը շոգեմեքենայ կամ շոգեկաթոսայ եղած տեղերում հեշտութեամբ կարելի է կատարել: Շոգին խողանակից և ջրից անհամեմատ աւելի լաւ կարող է մտնել ամանների ծակ ու ծուկերը և ոչնչացնել այնտեղ եղած անմաքրութիւնները, սոււնկերը:

Ամանները մաքրելուց յետոյ (մանաւանդ փայտեայ ամանները) պէտք է լաւ չորացնել. հակառակ դէպքում հեշտութեամբ մըլահոտ են ստանում, որ ոչ միայն կաթին, սերին և նոցանից ստացուած այլ կերակրեղէններին է վնասում, այլ և սոււնկերի զարգացմանը նպաստում է:



## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կատարելագործուած հեռախօս. — Ամերիկացի Պուպին պրոֆեսորը մի քանի ժամանակ առաջ հետեւեալ նշանաւոր գիւտն արաւ: Մինչև այժմ մարդուս ձայնը հեռախօսով միայն որոշեալ հեռաւորութեան վրայ էր հաղորդուում, որովհետեւ պղնձեայ հաղորդիչները, որոնց միջով անցնում է էլեքտրական հոսանքը, կլանում են նրա էներգիայի մի մասը և որբան երկար է լինում հաղորդիչը, այնքան աւելի են կլանում հոսանքի էներգիայից: Քանի որ հեռախօսով խօսելու համար շատ թոյլ հոսանք է գործածուում, ուստի համեմատաբար կարճ տարածութեան վրայ նրա թուլանալը շատ զգալի է դառնում. այս հոսանքները այլ ևս անկարող են հանդիսանում պահանջուած ոյժով ճօճել ընդունող ապպարատի ձողիկը. սրա հետեւանքը լինում է այն, որ ձայնը քանի գնում թուլանում է, անորոշ է դառնում: Զրի տակի հեռախօսով միայն 30—40 վերտա հեռաւորութեան վրայ բառերը պարզութեամբ լսուում են. իսկ գետնի վրայի հաղորդիչները մինչև 1000—1200 վերտա հեռաւորութեան վրայ բառերը